ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
14 մարտ 2023 թվական Արթիկ համայնք գ. Պեմզաշեն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՌ 2023» ՍՊ ընկերության կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի Հարավային տարածքում ընդերքի օգտագործման համար անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ հանրային 1-ին քննարկման

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 12:00-ին:

Ներկա էին՝ Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման և ՏՏ բաժնի պետ Ա. Թադևոսյանը, Արթիկ համայնքի ղեկավարի օգնական Տ. Չարչյանը, Պեմզաշեն գյուղի վարչական ղեկավար Ա. Վարդանյանը, «ԳՈՌ 2023» ՍՊԸ ընկերության տնօրեն Ա. Խիմոյանը, Պեմզաշեն գյուղի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարում էր Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի կողմից լիազորված անձ՝ Քարտուղարության, անձնակազմի կառավարման և ՏՏ բաժնի պետ Ա. Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանրային քննարկման նպատակը, այն է՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 19.11.2014թ. <Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին> N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ այսօր, 2023 թվականի մարտի 14-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայքի Պեմաշեն գյուղի վարչական շենքում տեղի են ունենում հանրային լսումներ: Մեր օրակարգում՝ «ԳՈՌ 2023» ՍՊ ընկերության կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի Հարավային տարածքում կատարվելիք ընդերքի օգտագործման համար անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ հանրային 1-ին քննարկումն է: Նա խնդրեց ներկաներին բարձրացնել իրենց հուզող հարցերը ընկերության ներկայացուցչին: Այնուհետև խոսքը փոխանցեց ընկերության ներկայացուցիչ Ա. Խիմոյանին, որպեսզի ինքն անձամբ ներկայացնի տարածքում նախատեսվող աշխատանքների ընթացքը:

Ելույթ ունեցան

«ԳՈՌ 2023» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Խիմոյանը: Նա ներկայացրեց, որ իր ընկերությունը Պեմզաշենի վարչական տարածքում ցանկանում է սկսել տուֆ քարի արդյունահանություն: Հանքավայրի բացմամբ Պեմզաշենում կստեղծվեն նոր աշխատատեղեր: 2022 թվականին ապագա հանքատարածքում իրականացված զննումների արդյունքում պարզ է դարձել, որ այստեղ կան բավարար քանակությամբ տուֆ քարի պաշարներ: Ինչ վերաբերվում է բարերարությանը, ապա իմ համայնքի համար ինչ պահանջվում է, ես պատրաստակամ եմ կատարելու, մասնավորապես՝ անապահով ընտանիքներին կտրամադրվի սոցիալական աջակցություն, Պեմզաշեն գյուղում իրականացվող ցանկացած միջոցառման պատրաստակամ ենք մասնակցելու:

Ամենակարևոր հանգամանքն այն է, որ հանքի շահագործմամբ կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչի շնորհիվ կլուծվեն մի քանի ընտանիքների սոցիալական խնդիրները:

Հնչեցին հարցեր

Համայնքի բնակչուհի Ա. Սարգսյանը հարցրեց՝ շահագործման ենթակա որքա՞ն տարածք է ցանկանում վարձակալել ընկերությունը:

Ընկերության տնօրենը պատասխանեց՝ մոտ 10 հա տարածքի մասին է խոսքը: Տարածքը համայնքապատկան է, գտնվում է գյուղից բավականաչափ հեռավորության վրա, 2 կմ-ից ավել հեռավորության վրա: Փոշին, ձայնը և այլ գործոններ գյուղի բնականոն ընթացքի վրա ոչ մի բացասական ազդեցություն չեն ունենա:

Տ. Չարչյանը հարցրեց՝ մոտավոր հաշվարկով քա՞նի աշխատատեղ է նախատեսվում ստեղծվել:

Ա. Խիմոյանն ասաց՝ մոտ քսան – քսանհինգ աշխատատեղ, բացի այդ աշխատելու է ծանր տեխնիկա՝ իր պատասխանատու աշխատակիցներով: Տարեցտարի այդ թիվը կշատանա:

Նիստը վարող Ա. Թադևոսյանը հարցրեց՝ կանաչապատման ինչ աշխատանքներ եք նախատեսում իրականացնել:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ իրենք ծառատունկ կանեն, որոշակի տարածքներ կկանաչապատվի, իսկ շահագործումից հետո մեր ընկերությունը սևահողը կլցնի իր տեղը և կդարձնի պիտանի հող: Դուրս բերված հողը կկուտակենք հանքի չօգտագործվող մասում, իսկ քարը արդյունահանելուց հետո կհարթեցնենք, կանենք ռեկուլտիվացիա:

Ա. Թադևոսյանը հարցրեց՝ տարածքը կեղտոտ է, դուք սանմաքրում, աղբից մաքրում կիրականացնե՞ք:

Ընկերության ներկայացուցիչն ասաց, որ տարածքը Պեմզաշեն գյուղի աղբավայրից գտնվում է 400-500 մ հեռավորության վրա: Ցանկություն կա փակել աղբավայրը, դարձնել կանաչ միջավայր: Աղբավայրի տարածքը նախկինում շահագործված, լքված հանքավայր է եղել, որպես բարերարություն, <<ԳՈՌ 2023>> ՍՊԸ-ն կկազմակերպի այդ աղբավայրի լիկվիդացումը:

Հ. Մարտիրոսյանն ասաց, որ իրենց համար, որպես գյուղի բնակիչ, կարևորն այն է, որ կստեղծվի աշխատատեղ, ռեկուլտիվացիայից հետո էլ նոր արոտի տեղեր կբացվի:
Ա. Խիմոյանն ասաց, որ ինքը, որպես ինժեներ-տեխնիկ, իր մասնագիտությանը մոտ է ռեկուլտիվացիոն գործընթացը, և առանց դժվարության կկազմակերպի դա:
Համայնքի բնակիչ Ռ. Առաքելյանը հարցրեց՝ ինչ կարժենա քարը:
Ընկերության տնօրենն ասաց, որ դա կորոշվի հանքարդյունահանումը կազմակերպելուց հետո:

Նիստը վարող Ա.Թադևոսյանը և ներկաները տվեցին իրենց դրական դիրքորոշումը «ԳՈՌ 2023» ՍՊ ընկերության կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի

Հարավային տարածքում ընդերքի օգտագործման համար անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, նիստը վարող Ա. Թադևոսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումն ավարտվեց 12:15-ին:

Հանրային քննարկումը վարեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝

_____Ա. Թադևոսյան

Արձանագրեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի օգնական՝ _____Տ. Չարչյան

<<ԳՈՌ 2023>> ՍՊԸ-ի տնօրեն _____Ա. Խիմոյան

Կից ներկայացվում է հանրային քննարկման տեսաձայնագրությունը:

Հանրային քննարկումների մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

«ԳՈՌ 2023» ՍՊ ընկերության կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի Հարավային տարածքում ընդերքի օգտագործման համար անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ հանրային 1-ին քննարկման մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

14.03.2023 թ. ժամը 12:00-ին

Արթիկի համայնքապետարան

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	[illegible]	093-729-888	[illegible]	[illegible]
2	[illegible]	093803293	[illegible]	[illegible]
3	[illegible]	093893293	[illegible]	[illegible]
4	[illegible]	094289694	[illegible]	[illegible]
5	[illegible]	093193222	[illegible]	[illegible]
6				
7	[illegible]	093523269	[illegible]	[illegible]
8	[illegible]	072-64-33-51		[illegible]
9	[illegible]	094-74-31-36	[illegible]	[illegible]
10	[illegible]	098-61-40-19	[illegible]	[illegible]
11	[illegible]	093-02-80-90	[illegible]	[illegible]
12	[illegible]	077-88-95-31	[illegible]	[illegible]
13	[illegible]		[illegible]	[illegible]
14	[illegible]	077711175	[illegible]	[illegible]
15	[illegible]	093253246	[illegible]	[illegible]
16	[illegible]	094499637	[illegible]	[illegible]
17	[illegible]	077852027	[illegible]	[illegible]
18				
19				
20				
21				